

Համար պէտք է 27,348 մամուկ . դարձեալ մամուկին էգը միայն խողակ կը շինէ հակիթները մէջը դնելու համար . ուստի պէտք է որ նոյնչափ ալ արու ըլլան՝ որով 2304 շերամին բանածը 54,696 մամուկ հազիւ կրնան հիւսել :

Լ՛յնոց բնական նշանները :

Հոգեբանական :

Լ՛յն ամիսն է այգեկուծք ընելու ամիսը . վասն զի խաղողները լաւ հասունցած կ'ըլլան . իսկ խաղողին հասնելուն նշանը՝ ողկուզին կոթին սևնալն է :

Լ՛յն ամսուս մէջ կը չորցընեն նաև տանձը, խաղողը և սունկը՝ : Զմեռուան պտուղները կը ժողվեն, այսինքն տանձ, խնձոր ու սերկելիլ¹, զղեար², յունապ, սին³ և այլն :

Լ՛յն պտուղներուն հասած ժամանակ կը որոշ իմանալը դժար է . վասն զի տարի կ'ըլլայ օր շուտ՝ տարի կ'ըլլայ որ ուշ կը հասնին, անկէ զատ՝ իրենց տեսակն ալ շատ տարբերութիւն կ'ընէ, և ինչուան նոյն ծառին վրայ եղածներն ալ ոմանք կանուխ կը հասնին ոմանք ետքը :

Ինչուզին վրայի կանաչ կճեպը հանելէն ետեւ՝ ողջերը կը չորցընեն կը պահեն, իսկ որդնոտածները կը ճզմեն ու եղը կը հանեն . աս եղը կը գործածուի վառելու, ներկերու հետ խառնելու, ու փայտերը փայլեցընելու :

Լ՛յնուս ետքերը հերկած ու պատրաստած արտերու մէջ կը ցանուի ցորենը . պարտիզպանը կը տնկէ մէկ քանի դիմացկուն բոյսեր, ծաղիկ պահողը արթուն կը կենայ՝ աշնանային ծաղկանց հունտերը ժողվելու, չորցընելու ու պահելու . մեխակներու

բողբոջները կը զատէ կը տնկէ . յակընթին սոխերը գետնի կամ թաղարի մէջ կը տնկէ :

Կը տնկէ նաև կակաչ, վարդ, հաղարջ¹, յասմիկ, և ասոնց նման ծաղկըներ :

Բիշատենէն քեզի ալ ուսմանց դաշտերը կը բացուին . հոն ալ առանց ցանելու ու ժողվելու վայելք չըլլար :

Ես մինչ կանխաւ 'ի գիւղս եկի
Մարգն էր կանաչ, օդ լուսաճեմ,
Կեանս հոսէին ակն արեգի
Ու աստեղք ծաղկանց նախանձընդդէմ :

Ի դաշտ 'ի բլուր և 'ի հովիտ
Զիս ձրգէին բնութեան վայելք
Իբր ըզմեղուս ծաղկանց փրթիթ .
Չըքնաղ աւուրցն արդ հասին ելք :

Ահա երկինք աղօտալոյս,
Մարմանդք ահա ծաղկանցն յուրաստ,
Ահա յերկնից ձիգ 'ի վայր կոյս
Համատարած մեզ առաքաստ,

Զոր հազիւ հազ 'ի միջրեայն
Պատառոտեն նետք արևուն,
Հակիրճ գործեալ զերեկորեայն
Տամուկ 'ի ցօղս առաւօտուն :

Սաղարթ սաղարթ, ո՛վ հիւր նախկին
Կենդանարար գարնան և զարդ,
Ի բարձրոտեան գեղնեալ դիտին
Ո՞րքեզ ձաղեալ հալածէ արդ :

Եւ զինչ, 'ի յօդս տարուբեր,
Զոտիւքս իսկոյն տալով գալար
Ի մեղմ չըրչիւն չըթանցդ յերբ
Զինչ խօսիցիս յուղիգ մոլար :

Զայն ասիցես, Դարձի են ժամք,
Յետ պարապոյ հանգէս գործոց .
Թէ կենցաղոյս տուրք ապաժամք
Միշտ յանցելոյն դիմեն 'ի ծոց :

Լըսեմ, սաղարթ, ըզձայնդ յոգիս .
« Մի մի օրերդ, ո՛վ Գրիգորն,
» Սահի կենաց ծառայդ զերդ զիս .
» Փութած ծաղկել մինչ ժամ դեռ է » :

ՏՆՏԵՍ ԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Ստորագրում :

ՍՄԱՐՍԱԿԻՆ խիստ քիչ ալիւր կ'ելլէ, և անկէ շինուած հացը սև, ծանր, դառն ու անհամ ըլլալուն՝ մարդիկ խիստ քիչ կ'ուտեն : (Սարմ տերեւնե-

1 Մանիուր : 2 Ալա : 3 Մուշուր : 4 Իմիւր :

1 Փրէկի Իւլիսի : 2 Իւլիսի :